ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/7 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար տեսամոնիտորների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 07.10.2026թ. N 614/Լ-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 21.10.2026թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Իսկանդարյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Հ.Երզինկյանը, Տ.Աբրահամյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/7 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Իսկանդարյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/7 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

-«Ֆլեքսիբլ Ափլիքեյշնս» ՓԲԸ-ն (ք.Երևան, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, V20 սենյակ)

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Չ/Հ	Մասնակիցների անվանումները	Ապրանքի անվանումը	Ներկայացրած գները ՀՀ դրամ			գնման գինը ՀՀ դրամ
				ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ	ԱԱՀ	ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ	
1	1	«Ֆլեքսիբլ Ափլիքեյշնս» ՓԲԸ	Տեսամոնիտորներ	2 880 000	0%	2 880 000	**2 880 000**

3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ չկան, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների վերաբերյալ տրվել է համապատասխան պարզաբանում:

4.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

-Էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած «Ֆլեքսիբլ Ափլիքեյշնս» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

5. Հանձնաժողովը որոշեց՝

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

1. «Ֆլեքսիբլ Ափլիքեյշնս» ՓԲԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:

2. Հաշվի առնելով, որ «Ֆլեքսիբլ Ափլիքեյշնս» ՓԲԸ-ի կողմից հայտով ներկայացրած գինը չի գերազանցում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից պլանավորված ընդհանուր գինը՝

-«Ֆլեքսիբլ Ափլիքեյշնս» ՓԲԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

3. Քանի որ, գնման ընթացակարգին միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել և անգործության ժամկետը կիրառելի չէ՝ ուստի ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «Ֆլեքսիբլ Ափլիքեյշնս» ՓԲԸ-ին պայմանագիր կնքելու համար՝ պահանջելով «Ֆլեքսիբլ Ափլիքեյշնս» ՓԲԸ-ից ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Իսկանդարյան

Անդամներ՝ Հ.Երզինկյան

Տ.Աբրահամյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան